ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/69

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.06.2018թ. թիվ 03/26-3/10076-18 գրությամբ «Կոմպասս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 30.05.2018թ. թիվ 01/61-12334 գրության հիման վրա, 06.06.2018թ. «Կոմպասս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 30.05.2018թ. թիվ 01/61-12334 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/85 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Կոմպասս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն):

03.05.2018թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝ 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցիների մասով հարցում է կատարվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

15.05.2018թ. ստացվել է պատասխան, ըստ որի Ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները կազմում են 1.866.258 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով՝ գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ Գագիկ Հուրոյանը:

3. <u>«Կոմպասս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կոմպասս» ՍՊԸ-ն 14.06.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Կոմպասս» ՍՊԸ-ն 23.04.2018թ. հայտ է ներկայացրել և մասնակցել է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/85 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 02.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը 6-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ (այսուհետ նաև՝ Կոմիտե) պարզելու ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու կամ չունենալու վերաբերյալ:

Հարցումը կատարվել է 03.05.2018թ:

Ի պատասխան վերը նշված հարցմանը, Կոմիտեի կողմից 15.05.2018թ. տրվել է եզրակացություն, որի համաձայն Ընկերությունը ունի 1.866.258 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.05.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացությունը, որոշել է «Կոմպասս» կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է 1.866.258 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Սակայն, «Կոմպասս» ՍՊԸ-ի կարծիքով տեղի է ունեցել սխալմունք, քանի որ Ընկերությունը 19.04.2018թ. և 20.04.2018թ. ընկերությանը սպասարկող բանկի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գլխամասային գրասենյակում թիվ 002170, թիվ 002171, թիվ 002173 և թիվ 002174 վճարման հանձնարարականների միջոցով թիվ 900008000490 միասնական գանձապետական հաշվեհամարին կատարել է համապատասխանաբար 1.900.000, 35.000, 950.000 և 1.920.000 ՀՀ դրամի հարկային պարտավորությունների մարում՝ ընդհանուր առմամբ 4.805.000 ՀՀ դրամի, որոնք Ընկերության խնդրանքով 29.05.2018թ. հաստատվել են Բանկի կողմից և տրամադրվել են Ընկերությանը:

Վերոհիշյալով պայմանավորված «Կոմպասս» ՍՊԸ-ն դիմել է Կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 23.04.2018թ. (հայտ ներկայացնելու օրվա դրությամբ)

Ընկերության կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, համոզվելու համար, թե 23.04.2018թ. ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունները ինչքան են կազմել, և արդյո՞ք վճարված գումարը լիովին բավարարել է վերը նշված օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունները մարված համարելու համար:

Ի պատասխան վերոգրյալ գրության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից «Կոմպասս» ՍՊԸ-ին 23.05.2018թ. տրվել է թիվ 588 տեղեկանքը, համաձայն որի՝ Ընկերությունը 23.04.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ.

- Ավելացված արժեքի հարկի գծով՝ 1.384.472 ՀՀ դրամի պարտավորություն և 43.588 ՀՀ դրամ տույժ,
- Շահութահարկի գծով՝ 1.461.655 ՀՀ դրամի պարտավորություն և - տույժ,
- Եկամտային հարկի գծով՝ 429.085 ՀՀ դրամի պարտավորություն և 9.114 ՀՀ դրամի տույժ,
- Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի գծով 13.191 ՀՀ դրամի պարտավորություն,
- Ընդամենը 3.288.403 ՀՀ դրամի պարտավորություն և 52.702 ՀՀ դրամի տույժ:

Այսպիսով, Օրենքով սահմանված ժամկետում 20.04.2018թ. Ընկերությունը ներկայացրել է 2018թ. մարտ ամսվա վերաբերյալ ԱԱՀ-ի և եկամտային հարկի հաշվարկներ, որոնցով առաջանում է պարտավորություն 1.384.472 ՀՀ դրամ՝ ԱԱՀ-ի գծով և 429.085 ՀՀ դրամ եկամտային հարկի գծով:

Շահութահարկի մասով առկա 1.461.655 ՀՀ դրամի պարտավորությունները վերաբերվում է 2017թ. շահութահարկի հաշվարկով առաջացած գումարին: ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն՝ ԱԱՀ-ի և եկամտային հարկի վճարման վերջնաժամկետն է սահմանվում հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը: Շահութահարկի վճարման վերաբերյալ հարկավոր է նշել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի համաձայն՝ մինչև օրենսգրքի ուժի մեջ մտնելը ավարտվող հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերվող հարկային պարտավորությունները ենթակա են

կատարման մինչև օրենսգրքի ուժի մեջ մտնելը գործող կարգով, այն է՝ համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի, որը գործել է մինչև 01.01.2018թ. ՀՀ հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելը: Նշյալով պայմանավորված 2017թ. շահութահարկի հաշվարկով առաջացող շահութահարկի գումարի վճարման վերջնաժամկետն է 2018թ. ապրիլի 25-ը:

Ցանկանում ենք նշել նաև, որ «Կոմպասս» ՍՊԸ-ն վճարումներ կատարելիս որևէ հնարավորություն չի ունեցել վճարվող գումարները ուղղել որևէ հարկատեսակի ուղղությամբ, այլապես նման դեպքում հնարավորություն կլիներ նշել, թե որ գումարն է ուղղված ԱԱՀ-ի և եկամտային հարկի մարմանը: Տվյալ պարագայում Կոմիտեի կողմից վճարված գումարները ուղղվել է որպես շահութահարկի գծով պարտավորությունների մարմանը, ինչի գծով հարկի մարման վերջնաժամկետը սահմանված է եղել 25.04.2018թ., իսկ ԱԱՀ-ն և եկամտային հարկը ներկայացվել է որպես ժամկետանց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ուսումնասիրության ենթարկելով 19.04.2018թ. և 20.04.2018թ. ընկերությանը սպասարկող բանկի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գլխամասային գրասենյակի թիվ 002170, թիվ

002171, թիվ 002173 և թիվ 002174 վճարման հանձնարարա¬կանները, որոնց միջոցով «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից կատարվել է հարկային պարտավորությունների մարում՝ ընդհանուր առմամբ 4 805 000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև դրանք համադրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից 23.05.2018թ. տրված թիվ 588 տեղեկանքի և 15.05.2018թ. տրված եզրակացության հետ, գտնում ենք, որ «Կոմպասս» ՍՊԸ-ն ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/85 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում չի խախտել ստանձնած որևէ պարտավորություն, քանի որ գնման հայտը ներկայացնելուց առաջ որպես բարեխիղճ հարկատու կատարել է օրենսդրությամբ սահմանված բոլոր վճարումները և համոզված լինելով հարկային պարտավորությունները ժամանակին կատարված լինելու փաստի մեջ, հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին: Տվյալ պարագայում Ընկերության մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորության փաստի արձանագրումը պայմանավորված չի եղել «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից դրսևորված վարքագծով, ինչի պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Ի լրումն 14.06.2018թ. ներկայացված առարկությունների Ընկերությունը 21.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Կոմպասս» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից 24.05.2018թ. տրված թիվ 593 տեղեկանքի համաձայն 19.04.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է հարկային պարտավորություններ.

- ԱԱՀ-ի գծով՝ 1.916.968 ՀՀ դրամ
- Շահութահարկի գծով՝ 4.013.774 ՀՀ դրամ
- Եկամտային հարկ գծով՝ 400.814 ՀՀ դրամ
- Ընդամենը՝ 6.331.556 ՀՀ դրամ:

Օրենքով սահմանված ժամկետում 20.04.2018թ. Ընկերությունը ներկայացրել է 2018թ. մարտ ամսվա վերաբերյալ ԱԱՀ-ի, Եկամտային հարկի և եռամսյակի բնապահպանական հարկի հաշվարկներ, որոնցով առաջացել էին հետևյալ

պարտավորությունները՝ 1 384 472 ՀՀ դրամ ԱԱՀ-ի գծով, 429.085 ՀՀ դրամ եկամտային հարկի գծով և 13.191 ՀՀ դրամ բնապահպանական հարկի գծով, արդյունքում 20.04.2018թ. դրությամբ հարկային պարտավորությունը կազմել է՝

- ԱԱՀ-ի գծով՝ 3.301.440 ՀՀ դրամ (վճարման վերջնաժամկետը 20.04.2018թ.)
- Եկամտային հարկի գծով՝ 829.899 ՀՀ դրամ (վճարման վերջնաժամկետը 20.04.2018թ.)
- Շահութահարկի՝ 4.013.774 ՀՀ դրամ (վճարման վերջնաժամկետը 25.04.2018թ.)
- Բնապահպանական հարկի գծով՝ 13.191 ՀՀ դրամ
- Ընդամենը՝ 8 145 113 ՀՀ դրամ:

«Կոմպասս» ՍՊԸ-ն 19.04.2018թ. և 20.04.2018թ. ընկերությանը սպասարկող բանկի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գլխամասային գրասենյակում թիվ 002170, թիվ 002171, թիվ 002173 և թիվ 002174 վճարման հանձնարարականների միջոցով թիվ 900008000490 միասնական գանձապետական հաշվեհամարին կատարել է համապատասխանաբար 1.900.000, 35.000, 950.000 և 1.920.000 ՀՀ դրամի հարկային պարտավորությունների մարում՝ ընդհանուր առմամբ 4.805.000 ՀՀ դրամի, որոնք Ընկերության խնդրանքով 29.05.2018թ. հաստատվել են Բանկի կողմից և տրամադրվել են Ընկերությանը:

«Կոմպասս» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից 23.05.2018թ. տրված թիվ 588 և 589 տեղեկանքների համաձայն Ընկերությունը 21.04.2018թ. և 23.04.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է հարկային պարտավորություններ.

- Ավելացված արժեքի հարկի գծով՝ 1.428.060 ՀՀ դրամ (ժամկետանց)
- Շահութահարկի գծով՝ 1.461.655 ՀՀ դրամ
- Եկամտային հարկի գծով՝ 438.199 ՀՀ դրամ(ժամկետանց)
- Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի գծով՝ 13.191 ՀՀ դրամ
- Ընդամենը՝ 3.341.105 ՀՀ դրամ, որից 1.866.259 ՀՀ դրամ ժամկետանց:

Սա վկայում է այն մասին, որ Ընկերության կողմից 19.04.2018թ. վճարված 4.805.000 ՀՀ դրամից 2.552.119 ՀՀ դրամ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի

կողմից ուղղվել է շահութահարկի գծով պարտավորությունների մարմանը, ինչի գծով հարկի մարմանը վերջնաժամկետը սահմանված է 25.04.2018թ.:

Արդյունքում ԱԱՀ-ն և եկամտային հարկը ներկայացվել է, որպես ժամկետանց պարտավորություն, քանի որ այդ հարկատեսակների մարման ժամկետը 20.04.2018թ. է:

Պարզ երևում է, որ շահութահարկի մարմանը ուղղված 2.552.119 ՀՀ դրամը զգալիորեն գերազանցում է ներկայացված ժամկետանց 1.866.258 ՀՀ դրամ պարտքը:

Ցանկանում ենք կրկին նշել, որ Շահութահարկի մասով առկա 1 461 655 ՀՀ դրամի պարտավորությունները վերաբերվում է 2017թ. շահութահարկի հաշվարկով առաջացած գումարին: ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն՝ ԱԱՀ-ի և եկամտային հարկի վճարման վերջնաժամկետն է սահմանում հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը: Շահութահարկի վճարման վերաբերյալ հարկավոր է նշել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի համաձայն՝ մինչև օրենսգրքի ուժի մեջ մտնելը ավարտվող հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերվող հարկային պարտավորությունները ենթակա են կատարման մինչև օրենսգրքի ուժի մեջ մտնելը գործող կարգով, այն է՝ համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի, որը գործել է մինչև 01.01.2018թ. ՀՀ հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելը: Նշյալով պայմանավորված 2017թ. շահութահարկի հաշվարկով առաջացող շահութահարկի գումարի վճարման վերջնաժամկետն է 2018թ. ապրիլի 25-ը:

Ցանկանում ենք նշել նաև, որ «Կոմպասս» ՍՊԸ-ն վճարումներ կատարելիս որևէ հնարավորություն չի ունեցել վճարվող գումարները ուղղել որևէ հարկատեսակի ուղղությամբ, այլապես նման դեպքում հնարավորություն կլիներ նշել, թե որ գումարն է ուղղված ԱԱՀ-ի և եկամտային հարկի մարմանը: Տվյալ պարագայում Կոմիտեի կողմից վճարված գումարները ուղղվել է որպես շահութահարկի գծով պարտավորությունների մարմանը, ինչի գծով հարկի մարման վերջնաժամկետը սահմանված է եղել 25.04.2018թ., իսկ ԱԱՀ-ն և եկամտային հարկը ներկայացվել է որպես ժամկետանց:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Կոմպասս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. **<u>ՍՑ-ԷՍ-2018/69 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.06.2018թ. թիվ 03/26-3/10076-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանը 30.05.2018թ. թիվ 01/61-12334 գրությունը և կից փաստաթղթերը, ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/85 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/85 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 02.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 21.05.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «Կոմպասս» ՍՊԸ-ի 14.06.2018թ. և 21.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումները, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից 19.04.2018թ. թիվ 593, 21.04.2018թ. թիվ 589 և 23.04.2018թ. թիվ 588 տրված տեղեկանքները, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.05.2018թ. տրված եզրակացությունը,

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/85 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Կոմպասս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/85 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 02.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 3-րդ կետով որոշել է Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Կոմպասս» ՍՊԸ-ին:

- 4-րդ կետով որոշել է հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.05.2018թ. տրամադրած եզրացության համաձայն «Կոմպասս» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 1.866.258 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 21.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Կոմպասս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (23.04.2018թ.) օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 1.866.258 ՀՀ դրամ գումարի չափով:

Նույն արձանագրությամբ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերությունը 20.04.2018թ. հարկային պարտավորությունները մարելու նպատակով կատարել է 4.805.000 ՀՀ դրամ գումարի չափով վճարում: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից տրված տեղեկանքի համաձայն 23.04.2018թ. դրությամբ Ընկերությունը ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ՝ ԱԱՀ-ի գծով՝ 1.428.060 ՀՀ դրամ, եկամտային հարկի գծով՝ 438.199 ՀՀ դրամ և շահութահարկի գծով՝ 1.461.655 ՀՀ դրամ գումարների չափով: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ ժամկետանց պարտավորությունը առաջացել է այն պատճառով, որ փոխանված գումարից հաշվանցվել է շահաթահարկի մասով վճարման գումարը, մինչդեռ տվյալ հարկատեսակի մասով Ընկերությունը կարող էր վճարում իրականացնել մինչև 25.04.2018թ. և «Կոմպասս» ՍՊԸ-ն վճարումներ

կատարելիս հնարավորություն չի ունեցել վճարվող գումարները ուղղել որևէ հարկատեսակի ուղղությամբ: Այսինքն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից վճարված՝ 4.805.000 ՀՀ դրամ գումարից 2.552.119 ՀՀ դրամ գումարն ուղղվել է շահութահարկի գծով պարտավորությունների մարմանն, ինչի արդյունքում ԱԱՀ-ն և եկամտային հարկը ներկայացվել է որպես ժամկետանց պարտավորություն, քանի որ այդ հարկատեսակների մարման վերջնաժամկետը սահմանված է՝ 20.04.2018թ.:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից 19.04.2018թ. թիվ 593, 21.04.2018թ. թիվ 589 և 23.04.2018թ. թիվ 588 տրված տեղեկանքները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով

կազմակերպված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/85 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ

տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.05.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Կոմպասս» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (23.04.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 1.866.258 ՀՀ դրամ:

- «Կոմպասս» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընկերության վճարված գումարները շահութահարկի գծով պարտավորությունների մարմանն ուղղելու արդյունքում:

- 23.04.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է հարկային պարտավորություններ՝ ԱԱՀ-ի գծով՝ 1.428.060 ՀՀ դրամ, շահութահարկի գծով՝ 1.461.655 ՀՀ դրամ, եկամտային հարկի գծով՝ 438.199 ՀՀ դրամ,

- Ընկերության կողմից 19.04.2018թ. վճարված 4.805.000 ՀՀ դրամից 2.552.119 ՀՀ դրամ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ուղղվել է շահութահարկի գծով պարտավորությունների մարմանը, ինչի գծով հարկի մարման վերջնաժամկետը սահմանված է՝ 25.04.2018թ.:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 23.04.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունն առաջացել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընկերության վճարված գումարները շահութահարկի գծով պարտավորությունների մարմանն ուղղելու արդյունքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «Կոմպասս» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության կողմից անկանխատեսելի իրավիճակից բխող հետևանքի առաջացման հանգամանքով, հետևաբար «Կոմպասս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.06.2018թ. թիվ 03/26-3/10076-18 գրությամբ «Կոմպասս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**